



SEF INTERNATIONAL

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Պաշտոնը:** Անվտանգության աշխատակից

**Աշխատանքի վայրը:** ք. Երևան, գլխամասային գրասենյակ

**Աշխատանքի նկարագիր:** Անվտանգության աշխատակիցն ապահովում է կազմակերպության բոլոր մասնաճյուղերի գործունեության անվտանգ և անխափան իրականացումը:

**Հիմնական աշխատանքային պարտականությունները**

- Ապահովել կազմակերպության մասնաճյուղերի անվտանգության համակարգերի (ահագանգման համակարգ, տեսազննում) անխափան աշխատանքը, ծածկագրերի գաղտնիությունը: Անհրաժեշտության դեպքում անհապաղ զեկուցել տնօրենին կամ նրան փոխարինող անձին անսարքությունների մասին:
- Ապահովել մասնաճյուղերի դրամապահոցների բացման և փակման գործընթացը:
- Հաշվառել, պահպանել և վերահսկել կազմակերպության արտաքին և ներքին դռների բանալիների գործածումը:
- Յուրաքանչյուր աշխատանքային օրվա սկզբին և ավարտին ապահովել կազմակերպության մասնաճյուղերի բացման և փակման գործընթացի անվտանգությունը:
- Գործառնական օրվա ամբողջ ընթացքում տեսանկարահանող սարքերի միջոցով հետևել մասնաճյուղերում կատարվող աշխատանքների անվտանգ և անխափան իրականացմանը:
- Հետևել մասնաճյուղում անվտանգության կանոնների պահպանմանը և որևէ խախտման դեպքում զեկուցել տնօրենին կամ նրան փոխարինող անձին:
- Ներկայացնել անվտանգությանն ուղղված կարգերի բարելավման առաջարկներ:

**Պահանջվող գիտելիքներ, հմտություններ և կարողություններ**

Անվտանգության համակարգերի աշխատանքի 3 տարվա աշխատանքային փորձ,

Անվտանգության համակարգերի իմացություն,

Հրահանգները ճշգրիտ կատարելու ունակություն,

Ծառայություններ մատուցելու հմտություններ,

Գործնական շփման էթիկա:

**Դիմելու կարգը:**

Ցանկացողները կարող են ներկայացնել իրենց ինքնակենսագրականները էլեկտրոնային փոստի [cvsecurity@sef.am](mailto:cvsecurity@sef.am) հասցեին:

Հարցերի դեպքում կարող եք զանգահարել (374 10) 20 28 21/22:

Վերջնաժամկետ՝ 05 փետրվարի 2018թ.: